ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1936—1938 ԹԹ. ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ

Ա. Ա. ԲԱՅՐԱՄՅԱՆ

Հայերը եղել են Ալեքսանդրետի սանջաքի բազմազգ բնակչության էթնիկական երեք գլխավոր խմբերից մեկը[1]։ 1936 թ. սեպտեմբերին Ալեքսանդրետի սանջաքի հարցի շուրջը ստեղծված քաղաքական ու դիվանագիտական երկարատև պայքարից հետո Սիրիայի հյուսիս-արևմտյան ծովափնյա այս շրջանը 1939 թ. հուլիսին կցվեց Թուրքիային[2]։

Հայերը խաղացել են շատ կարևոր, որոշ հանգամանքներում նույնիսկ վճռական դեր մանդատի ժամանակաշրջանում՝ սանջաքի տնտեսական, մշակութային-հասարակական և քաղաքական կյանքում։ Սիրիական սանջաքի դոյությանն իսկ սպառնացող «Ալեքսանդրետի կոնֆլիկտի» ժամանակաշրջանում (1936—1939) սիրիական իրավահավասար և հայրենասեր քաղաքացի հայերը չէին կարող անմասն մնալ սանջաքի պաշտպանության համար մղվող համաժողովրդական պայքարից։ Ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական այդ շարժման մեջ հայերը պատվով կատարեցին իրենց հայրենասիրական պարտքը[3]։

Այս հոդվածով մենք նպատակ ունենք համառոտակի ուսումնասիրության ենթարկել Ալեքսանդրետի պաշտպանության համար 1936—1938 թթ. մղված պայքարին հայերի մասնակցության գլխավոր փուլերն ու դրվագները։

* * *

Ալեքսանդրետի սանջաքի պրոբլեմը Թուրքիայի կառավարության կողմից միջազգային դիվանագիտության և Ազգերի Լիգայի սեղանի վրա դրվեց 1936 թ. սեպտեմբերին, երբ ստորագրվեց Ֆրանսո-սիրիական դաշնագիրը, որը Սիրիային խոստանում էր անկախություն՝ «երեք տարվա փորձնական շրջանից» հետո։ Օգտվելով իր համար շատ նպաստավոր միջազգային իրադրությունից և 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի ֆրանսո-թուրքական պայմանագրի 7-րդ հոդվածով ու կից փաստաթղթերով[4] շրջանի թուրքական փոքրամասնությանն ու Անկարայի կառավարությանը վերապահված հատուկ իրավունքներից, Թուրքիան պահանջեց «անկախություն տալ Ալեքսանդրետի սանջաքին», ինչպես այն տրվում էր Սիրիային ու Լիբանանին։

Սանջաքի թուրք բնակչության մի մասը շարունակ պահանջել է շրջանի կցումը Թուրքիային և այդ ուղղությամբ տարել է սիստեմատիկ աշխատանք և կազմակերպել սեպարատիստական հրապարակային ելույթներ[5]։ Սեպարատիստական այդ շարժման դեմ շարունակ պայքարել են սան-

---

1 Սանջարի 240.000 ազգաբնակչությունից (1937 թ.) շուրջ 120.000-ը արաբներ էին, 43.000-ը՝ հայեր, մնացածը՝ թուրքեր, թուրքմեններ, քրդեր, չերքեզներ։ («Ալեքսանդրետի Ավտոնոմ Սանջաքը» 1920—1938 թթ. ունեցել է վարչա-ֆինանսական «հատուկ ռեժիմ» Ֆրանսիայի մանդատին հանձնված սիրիական պետության շրջանակներում։ Այս մասին մանրամասն տե՛ս սանջաքի իրավական ստատուսին և սոցիալ-քաղաքական դրությանը (1920—1930-ական թվականներին) նվիրված մեր հոդվածը՝ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 12, էջ 27—36)։

2 Տե՛ս «Дипломатический Словарь», М., 1964, հատ. 3, էջ 378—379։

3 Տե՛ս Л. Х. Тер-Мкртчян, Армяне в странах Арабского Востока, М., 1965, էջ 42—43։

4 Տեքստերը տե՛ս проф. Ю. В. Ключков и проф. А. В. Сабанин, Международная политика новейшего времени в договорах и декларациях, часть III, вып. II, М., 1929, էջ 115—116։

5 «Իրրեդենտիստական» (վերամիավորման) այդ շարժմանը որպես ելակետ ծառայեց 1923 թ. մարտին Աղանայում Մ. Քեմալի կողմից Անտիոքի ու Ալեքսանդրետի շրջանի թուրքերի մասին արված հայտարարությունը, որտեղ ասված էր. «Քառասուն դարերի թուրքական մի տերիտորիա (?!) երբեք չի կարող ստրուկ դառնալ»։ Տե՛ս Homet Marcel, Syrie—Terre Irredente, Histoire Secrete du Traité Franco-Syrien, Paris, 1938, էջ 142։

ջաքի արաբական մեծամասնությունը և ամբողջ հայ ազգաբնակչությունը. թուրք չափավորականներն ու այլ փոքրամասնություններ (թուրքմեններ, քրդեր, չերքեզներ) նույնպես հաճախ հանգեց էին գալիս թուրք սեպարատիստների դեմ։ Երբ 1936 թ. սեպտեմբերին Անկարայի դիվանագիտական գործողություններին ու մամուլի հակասիրիական կամպանիային զուգահեռ՝ սանջաքի թուրք սեպարատիստները հրապարակային ելույթներ սկսեցին ընդդեմ ֆրանս-սիրիական դաշնագրի ու Սիրիայի հետ սանջաքի միասնության, շրջանի արաբական մեծամասնությունը, հայ ազգաբնակչությունն ու մնացած փոքրամասնությունները (բնակչության շուրջ 80 տոկոսը) ձեռնարկեցին սիրիական սանջաքի պաշտպանության գործնական միջոցառումներ։ Խաղաղ ցույցերով, մամուլի միջոցով նրանք արտահայտեցին իրենց հավանությունը ֆրանս-սիրիական դաշնագրին և սանջաքը սիրիական հանրապետության կազմում պահպանելու իրենց կամքը։ Սանջաքի հայրենասերները անհրաժեշտ համարեցին հրապարակով իրենց պատվիրակություններն ուղարկել Հալեպ՝ մասնակցելու համար ֆրանս-սիրիական դաշնագրի ստորագրումից հետո Փարիզից վերադարձող սիրիական պատվիրակությանը դիմավորելու համար կազմակերպված համաժողովրդական տոնախմբություններին։ Այդ կապակցությամբ 1936 թ. սեպտեմբերի 25-ին սանջաքի հայրենասերները մի շարք պատվիրակությունների հետ Հալեպ ժամանեցին նաև Մուսալեռան, Քեսապի, Կրկ-Խանի և Ալեքսանդրետի ու շրջակայքի հայերի պատվիրակությունները։ Ալեքսանդրետի պատվիրակությունը գլխավորում էր սանջաքի կոմունիստական կազմակերպության պատասխանատու աշխատողներից՝ Փայլակ Իսրայելյանը։ Սիրիական ազգային դրոշի հետ ալեքսանդրետցիները տանում էին նաև կարմիր դրոշ. սա Հալեպում հրապարակային ցույցի ժամանակ կարմիր դրոշ պարզելու առաջին դեպքն էր[6]։

Սիրիական ազգային ժամանակավոր կառավարությունը որոշել էր 1936 թ. նոյեմբերին նոր պառլամենտի ընտրություններ անցկացնել ամբողջ Սիրիայում, ներառյալ նաև սանջաքում։ Շրջանի թուրքերին հրահանգ տրվեց բոյկոտի ենթարկել ընտրությունները[7]։ Այս գործողությամբ թուրք սեպարատիստները ձգտում էին հասնել այն բանին, որ ընտրությունների ժամանակ պահանջված քվորումը ձեռք չբերվի սանջաքում, դեպուտատների ընտրությունը մնա առկախ և դրանով իսկ «ապացուցվի», թե իբր «թուրքերը մեծամասնություն են կազմում» շրջանում։ Բոլոր ընտրողներին իրենց ենթարկելու համար սեպարատիստները սանջաքում ստեղծեցին քաղաքական ահաբեկման մթնոլորտ, որի հետևանքով տեղի ունեցան ընդհարումներ թուրքերի և արաբների ու հայերի միջև։ Նոյեմբերի 6-ին սեպարատիստների կողմից Անտիոքում սպանված 4 արաբների հուղարկավորությունը վերածվեց արաբ-հայ համերաշխության ու Սիրիայի հետ սանջաքցիների միասնության հզոր ցույցի[8]։

Սանջաքի ներսում և սանջաքից դուրս՝ օտարերկրյա իմպերիալիստների միջազգային դիվանագիտական անդրկուլիսյան դավերին դիմագրավելու համար, իր անկախության շեմին գտնվող Սիրիայի բոլոր կողմերում տարերայնորեն առաջացան «Սանջաքի պաշտպանության կոմիտեներ», որոնց կենտրոնական խորհուրդը ստեղծվեց Դամասկոսում։ Առանց խտրության բոլոր սիրիացիները՝ արաբներն ու հայերը, քրիստոնյաները ու մուսուլմանները, կոմունիստները ու ազգայնականները գործուն մասնակցություն բերեցին Ալեքսանդրետի սանջաքի պաշտպանության տեղական կոմիտեների ձեռնարկած համաժողովրդական միջոցառումներին։ Առանձնապես պետք է նշել կոմունիստների ակտիվ գործունեությունը այդ կոմիտեներում։ Հայ ազգաբնակչության բոլոր խավերը, հատկապես Հալեպում, Դամասկոսում, Ալեքսանդրետում, Անտիոքում, Լևշիե-Սվեդիայում (Մուսա-լեռ) և այլուր, նույնպես ակտիվորեն մասնակցում էին այդ կոմիտեների ձեռնարկած ժողովներին, միտինգներին ու այլ հրապարակային ելույթներին։ Հայերը առատաձեռն կերպով մասնակցում էին սանջաքում ռեպրեսիաների ու ահաբեկման զոհ դարձած հայրենասերներին նյութական օգնություն ցույց տալու նպատակով կազմակերպված հանգանակություններին։ Դամասկոսի կենտրոնական խորհրդում վճռական ձայնով իրենց ներկայացուցիչներն ունեին հայ կոմունիստները և հնչակյանները։ Հայկազ Բայաջյանը և ուրիշ հայեր, որպես «Սուրիահայ ժողո-

---

6 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի արխիվ, գործ N.N 1, 3։

7 Տե՛ս «Սանջաքի ժողովրդին» սեպարատիստական կոչը. Ayin Tarihi, Ankara, 1937, հունվար, էջ 101։ Նաև՝ Aita Adnan, Le Conflit d'Alexandrette et la S. D. N., Damas, 1949, էջ 13։

8 Տե՛ս Véou, Paul du, Le Désastre d'Alexandrette, Paris, 1938, էջ 53։

9 Տե՛ս S. H. Longrigg, Syria and Lebanon under French Mandate, London, 1958, էջ 227, նաև՝ „Современная Сирия", Институт востоковедения АН СССР, М., 1959, էջ 151։

վրդական ճակատի» ներկայացուցիչներ, մասնակցում էին սանջաքի պաշտպանության Հալեպի նահանգային խորհրդի աշխատանքներին[10]։

«Սուրիահայ ժողովրդական ճակատը», որը հիմնադրվել էր 1936 թ. հուլիսի 19-ին Հալեպում, մեծապես սատարեց արաբ-հայ եղբայրական համագործակցության և սանջաքի պաշտպանության գործին։ Ժողովրդական ճակատի տեղական կոմիտեներ առաջացան ինչպես ամբողջ Սիրիայի, այնպես էլ սանջաքի բոլոր հայաբնակ վայրերում։ Այդ ճակատում համախմբված հայ կոմունիստները, հնչակյանները, ռամկավար-ազատականները, շաղոյին դաշնակցականները, ինչպես նաև երիտասարդական կամ հայրենակցական առաջադիմական կազմակերպությունները կատարեցին շատ շնորհակալ աշխատանք՝ ակտիվ կերպով մասնակցելով Սիրիայի ազգային-ազատագրական շարժմանը և Ալեքսանդրետի պաշտպանության պայքարին։ «Սուրիահայ ժողովրդական ճակատը» թե՛ 1936 թ. պառլամենտական ընտրությունների, թե՛ հաջորդ տարիների քաղաքական խոշոր իրադարձությունների ժամանակ հանդես եկավ Սիրիայի արաբական հայրենասիրական խմբավորումների հետ միասնական ճակատով՝ հանուն միասնական ու անկախ սիրիական հանրապետության[11]։

1936 թ. նոյեմբերի 13-ին պառլամենտական ընտրությունների առաջին տուրի նախօրյակին, Անտիոքում կազմակերպվող արաբ-հայկական նախընտրական մասսայական միտինգը խանգարելու համար թուրք էքստրեմիստները զինված մարդիկ ուղարկեցին միտինգի վայրը։ Ընդհարումների հետևանքով եղան վիրավորներ, սպանվածներ։ Նույն երեկոյան կազմակերպվեց արաբ-հայկական բողոքի մասսայական ցույց, որին մասնակցեցին նաև Որոնթեսի հովտից, Մուսալեռից, Լևշիեից, Քեսապից եկած հազարավոր ցույցաբներ։ Ցուցարարները մանդատային իշխանություններից պահանջում էին սանջաքում վերջ դնել թուրք սեպարատիստների սանձարձակություններին և նորմալ պայմաններ ստեղծել ընտրությունների համար։ Սիրիական հասարակական կարծիքի ուժեղ ճնշման տակ սանջաքում Ֆրանսիայի թրքաասեր պատվիրակ Պիեռ Դյուրիյոն հարկադրված էր Անտիոքից հեռացնել 5 թուրք գործիչների և փակել տալ էքստրեմիստների «Ենի Գյուն» թերթը[12]։

Ընտրությունների առաջին տուրը նոյեմբերի 14-ին, ինչպես և 2-րդ տուրը՝ նոյեմբերի 30-ին, ընթացան համեմատաբար նորմալ իրադրության մեջ։ Բացի թուրք սեպարատիստներին ենթարկվողներից, սանջաքում բոլոր ընտրողները մասնակցեցին քվեարկության և պահանջված քվորումը շատ ավելիով ձեռք բերվեց[13]։ Նույնիսկ սանջաքից դուրս բնակվող մի քանի հարյուր մուսալեռցիներ, քեսապցիներ եկել էին իրենց ծննդավայրերը՝ ընտրության մասնակցելու համար[14]։ Ինչպես հաղորդում է Հալեպի «Ան-Նազիր» թերթը, «հատկանշական է ընդգծել այն հանգամանքը որ ընտրությանը մասնակցող քվեարկողների տոկոսը այս անգամ շատ ավելի բարձր էր եղել սանջաքում, քան նախորդ ընտրությունների ժամանակ։ Այդ բացատրվում է նրանով, որ ժողովուրդը պարզ գիտակցում է, թե պառլամենտական ընտրություններին մասնակցելը փաստորեն հանդիսանում է արաբական-սիրիական սանջաքի պաշտպանության գործ»[15]։ Այսպիսով, 1936 թ. նոյեմբերի ընտրությունների ժամանակ սանջաքի հայերը մեկ անգամ էլ գործնականորեն արտահայտեցին իրենց նվիրվածությունը սիրիական հայրենիքին։

1936 թ. դեկտեմբերի 14—16-ին Ազգերի Լիգայի խորհուրդը, Թուրքիայի կառավարության պահանջով, նախնական քննարկման առարկա դարձրեց «Ալեքսանդրետի և Անտիոքի շրջանի հարցը» և որոշեց չեզոք դիտորդների միջազգային հանձնաժողով ուղարկել սանջաք։ Փաստական իրադրությունը տեղում ուսումնասիրելու համար դիտորդները 1937 թ. հունվարի 1-ին առաջին անգամ եղան Կրշկ-Խանում և հաստատեցին, որ «գժտության ոչ մեկ հիմք չկա և արաբները, հայերը, թուրքերը աշխատում ու ապրում են կատարելապես համերաշխ»[16]։ Անտիոքում, որտեղ գտնվում էր թուրք էքստրեմիստ-սեպարատիստների գլխավոր շտաբը, դիտորդները ականատես եղան «պրոթուրքական բավականին սաստիկ ցույցերի»։ Դրանց ի պատասխան, հաջորդ օրը

---

10 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի արխիվ, գործ № 5։

11 Այս մասին մանրամասն տե՛ս «Սուրիահայ ժողովրդական ճակատի» արխիվը. Արևելագիտության սեկտորի արխիվ, գործ №№ 5, 6, 7, 10, 12։ Նաև՝ Longrigg. նշվ. աշխ., էջ 239—240։

12 Տե՛ս Véou, նշվ. աշխ., էջ 56։

13 Նույն տեղում, էջ 60։ Նաև՝ Alla, նշվ. աշխ., էջ 15։

14 Տե՛ս Արևելագիտության սեկտորի արխիվ, գործ № 10։

15 «Ան-Նազիր», Հալեպ, 20 դեկտեմբերի, 1936։

16 „L'Asie Française", Paris, 1937, հունվար, էջ 34—35։

քաղաքի ու շրջակա գյուղերի, ավանների արարները. հայերը կազմակերպեցին մեծ ցույց, արտահայտելով Սիրիայի հետ հավերժ միասնության իրենց անհողդողդ կամքը[17]։ Ալեքսանդրետում բազմահարյուր արարներ ու հայեր դիմորդների մուտքը քաղաք դիմավորեցին «Կեցցե՛ Սիրիան» բաղականչություններով[18]։ 1937 թ. փետրվարին, այցելելով հայկական Քեսապ ավանն ու շրջակա հայ գյուղերը, դիտորդները արձանագրեցին շրջանի հայերի կամքն ու ցանկությունը՝ «իրենց շրջանը կցել Լաթաքիայի նահանգին, որից Քեսապը կախում ունի տնտեսապես»[19]։ Այս ցանկության հիմքում պետք է փնտրել հայերի մտավախությունը՝ սանջաքը Թուրքիային կցելու հավանականության առթիվ։

«Սանջաքի հարցը» ըստ էության Ազգերի Լիգայի խորհրդի քննարկմանն էր դրվելու հունվարի վերջերին։ Այդ կապակցությամբ սեպարատիստները ամեն օր ցույցեր էին կազմակերպում սանջաքում՝ պահանջելով շրջանը կցել Թուրքիային։ Արաբները ու հայերը կազմակերպեցին հակացույցեր։ Այդ օրերին «Ըզվեստիայի» հատուկ թղթակիցը Փարիզից հաղորդում էր, որ «Անտիոքում 2000 արաբ ցուցարարներ հայտարարել են Սիրիայի արդար իրավունքը սանջաքի վրա և պահանջել են Ֆրանսիայից՝ պաշտպանել այդ իրավունքը»[20]։

1937 թ. հունվարին Ազգերի Լիգան, Անգլիայի ճնշմամբ, կոմպրոմիսային լուծում տվեց սանջաքի կոնֆլիկտին։ Կոմպրոմիսային այդ կարգավորումը իր արտահայտությունը գտավ 1937 թ. մայիսին Լիգայի խորհրդի կողմից Ալեքսանդրետի սանջաքի համար ընդունված նոր Ստատուսի և Հիմնական օրենքի մեջ։ Այդ ակտերով սանջաքը փաստորեն անջատվում էր Սիրիայից ու դրվում թուրք-ֆրանսիական համատեղ վերահսկողության տակ, միայն անվանապես մնալով սիրիական պետության կազմի մեջ[21]։

Բնական է, որ Սիրիայի և արաբական բոլոր երկրների հասարակական կարծիքը դժգոհությամբ դիմավորեց ժնևյան կարգավորումը։ Ժնևյան կոմպրոմիսը ընդունվել էր հակառակ Սիրիայի կամքի ու առանց նրա մասնակցության։ Հետևաբար այն մերժվեց սիրիական ժողովրդի կողմից։ Դեռևս 1937 թ. հունվարի վերջերին, երբ հայտնի էին դարձել Ժնևում ձեռք բերված «սկզբունքային համաձայնության» պայմանները, բողոքի հսկա ցույցեր ու գործադուլներ տեղի ունեցան Հալեպում, Դամասկոսում, Անտիոքում, Ալեքսանդրետում և Սիրիայի այլ քաղաքներում[22]։ Հունվարի 26-ի Հալեպի վիթխարի ցույցին մասնակցեցին շուրջ 30.000 արաբներ ու հայեր, որոնք վանկարկում էին. «Ալեքսանդրետը արաբներինն է», «Կորչե՛ն իմպերիալիստները»[23]։ Հալեպի ցույցը գլխավորում էին մինիստրներ, դոկտոր Ա. Քեյյալին և Հասան-Բեկը։ Դամասկոսի 15.000-անոց ցույցի առջևից քայլում էին պրեմիեր-մինիստր Ջ. Մարդամ-Բեկը և արտաքին գործերի մինիստր Ս. Ջաբրին[24]։

Բողոքի մասսայական ելույթներին զուգընթաց՝ Սիրիայի, Լիբանանի ու արաբական մյուս երկրների մամուլում, բոլոր հայկական թերթերում հրապարակվում էին խմբագրականներ, հոդվածներ, որոնք դատապարտում էին ժնևյան անարդարացի «լուծումը»։ Արաբ ու հայ համայնքների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների անունից բողոքի բազմաթիվ հեռագրեր ուղարկվեցին Բեյրութ, Ժնև[25], Դամասկոսի «Ալ-Այյամ» թերթը, խոսելով «Սանջաքի պաշտպանության գործում հայերի աջնվագույն դիրքավորման» մասին, հաղորդում է, որ Անտիոքի շրջանի հայերը 1937 թ. փետրվարի 2-ին հեռագիր են ուղարկել Ազգերի Լիգայի խորհրդին։ Այդ հեռագրում հայերը հայտարարում էին, որ «իրենք արարների հետ կատարյալ համերաշխության մեջ են ապրում սիրիական հայրենիքում և իրենց ցասումն են արտահայտում սանջաքի գործերին Թուրքիայի որևէ ձևի միջամտության դեմ, որովհետև չեն մոռացել 1915—1919 թթ. հայերի հանդեպ թուրքերի կատարած վայրագությունները»[26]։

1937 թ. փետրվարի 9-ից 11-ը սանջաքում տեղի ունեցան ժնևյան ակտերի դեմ բողոք արտահայտող ժողովրդական ցույցեր, որոնց նպատակն էր նպաստել և հավանություն տալ սիրիա-

---

17 Véou, Նշվ. աշխ., էջ 64։
18 „Le Temps", Paris, 6 հունվարի, 1937։
19 „Oriente Moderno", Roma, 1937, ապրիլ, էջ 179։
20 «Известия», 8 հունվարի, 1937։
21 Այս մասին մանրամասն տե՛ս «Дипломатический Словарь», հատ. 3, էջ 378։
22 Տե՛ս Véou. Նշվ. աշխ., էջ 66։
23 Տե՛ս Արևելագիտության սեկտորի արխիվ, գործ № 5։
24 „Oriente Moderno", 1937, մարտ, էջ 138։
25 J. J. Morgan, La Fin du Mandat Français en Syrie, Paris. 1938, էջ 130։
26 «Ալ-Այյամ», Դամասկոս, 10 փետրվարի, 1937։

կան կառավարական պատվիրակության գործողություններին, որը մեկնել էր Եվրոպա պահանջելու համար վերանայել ժնևյան կարգավորման պայմանները։ Սեպարատիստները փորձեցին խանգարել արաբ-հայկական մասսայական ելույթները։ Սակայն այդ նրանց չհաջողվեց, որովհետև ավելի քան 25.000 արաբ և հայ ցուցարարների դեմ նրանց հաջողվել էր հավաքել հազիվ 2000 ցուցարարներ։

Երբ 1937 թ. մայիսի 27-ին հայտնի դարձավ սանջաքի նոր Ստատուսի բովանդակությունը, ամբողջ սանջաքում հայտարարվեց ընդհանուր գործադուլ. կանգ առան տրանսպորտը, առևտուրը, հասարակական կյանքը։ Մայիսի 29-ին Սիրիայի հետ միասնության կողմնակից բոլոր հայրենասերները՝ արաբ, հայ, թուրք, մուսուլման թե քրիստոնյա, հավաքվեցին բողոքի միտինգի Անտիոքի կենտրոնական մզկիթում։ Բազմահարյուր հայ լեռնականներ եկել էին Մուսա-լեռից, Քեսապից. նրանց գլխավորում էին հայ կոմունիստներ Հ. Տեր-Պետրոսյանը, Հ. Ջեմենյանը[28]։ Միտինգի մասնակիցները հայտարարեցին իրենց միահամուռ վճիռը՝ մերժել ժնևյան կարգավորումը. որը հակառակ իրենց կամքի սանջաքցիներին բաժանում էր սիրիական մայր-հայրենիքից։ Բողոքի հինգ պետիցիաներ ուղարկվեցին արաբ, հայ և այլ համայնքների անունից[29]։

Հունիսի 2-ին սիրիական պառլամենտը հոտնկայս և միաձայն ընդունեց բողոքի բանաձև ժնևյան ակտերի դեմ, որը ուղարկվեց Ազգերի Լիգա։ Սանջաքի հայ և մյուս դեպուտատները հավանություն տվեցին բանաձևին։ Խոսելով Հալեպի ու հյուսիսային Սիրիայի հայ ու բոլոր քրիստոնյա ընտրողների անունից, դեպուտատ Էդմոն Ռաբբաթը պառլամենտից պահանջեց ամեն միջոց ի գործ դնել «սիրիական մայր-հայրենիքի ծոցում պահելու համար Ալեքսանդրետի սանջաքը, որը հանդիսանում է արաբական երկրների միասնության ու անկախության բանալին»[30]։

Հունիսի 3-ին ընդհանուր գործադուլը տարածվեց ամբողջ Սիրիայում։ Սանջաքում գինված ընդհարումներ տեղի ունեցան սեպարատիստների և արաբ ու հայ հայրենասերների միջև. եղան տասից ավելի վիրավորներ[31]։ Ֆրանսիայի պատվիրակը անհրաժեշտ գտավ Անտիոքում հրավիրել արաբ, հայ և թուրք համայնքների ղեկավարների ու քաղաքական գործիչների խորհրդակցություն՝ «կողմերի հաշտեցման ու լարված դրության վերջ տալու նպատակով»։ Այս միջոցառումը նախօրոք դատապարտված էր ամլության[32]։

Լարված դրությունն ու խառնակությունները, աբյունահեղ ընդհարումները շարունակվեցին ամբողջ ամառը, նույնիսկ թրքասեր պատվիրակ Պիեռ Դյուրիյոյի 1937 թ. հուլիսի 18-ին պաշտոնից հեռացվելուց հետո էլ[33]։ Երբ 1937 թ. սեպտեմբերի 6-ին Ֆրանսիայի նոր պատվիրակ՝ դեմոկրատ պետական գործիչ Ռոժե Գաոոն ստանձնեց իր պաշտոնը սանջաքում. դրությունը համեմատաբար մեղմացավ շնորհիվ նոր պատվիրակի ձեռք առած միջոցների՝ սահման դնելու սեպարատիստների գործողություններին[34]։

1937 թ. նոյեմբերի 29-ին սանջաքի համար Ժնևում ընդունված նոր Ստատուսը հայտարարվեց ուժի մեջ։ Այդ կատարվեց Անկարայի դիվանագիտական ուժեղ ճնշմանը տեղի տալով, չնայած որ Ստատուսը ուժի մեջ պետք է մտներ ֆրանսիական մանդատի վերացումից հետո։ Այդ ակտը թե «իրավական խախտում» էր, թե «հակասահմանադրական գործողություն», որովհետև կատարվում էր ֆրանս-սիրիական դաշնագրի ուժի մեջ մտնելուց առաջ[35]։

1937 թ. նոյեմբերի 29-ի պրոկլամացիան բնականաբար սանջաքում ու ամբողջ Սիրիայում ընդունվեց բողոքի նոր ալիքներով, որոնք տարածվեցին հարևան արաբական երկրները։ Այլևս կասկած չէր մնում, որ իմպերիալիստները կատարել էին առաջին «իրավական» քայլը սանջաքը Թուրքիային միացնելու ճանապարհին։ Նոր իրադրությունից գոտեպնդված՝ թուրք սեպարատիստ-

---

27 Տե՛ս Véou, նշվ. աշխ., էջ 67—68։

28 Տե՛ս Արևելագիտության սեկտորի արխիվ, գործ N.N 3, 6, 12։

29 Տե՛ս League of Nations, Official Journal, Permanent Mandates Commission's Report—1937, Document C. P. M. 2032, February, 1939, էջ 172։

30 „La France Méditerranéenne et Africaine", Paris, 1948, պրակ 1, էջ 124 (ծնթբ. 3)։

31 Տե՛ս „Le Temps", 8 հունիսի, 1937, „Morning Post", 3 հունիսի, 1937։

32 Տե՛ս „Oriente Moderno", 1937, հունիս, էջ 298։

33 Տե՛ս „L'Echo d'Alexandrette", Alexandrette, 24 հուլիսի, 1937։

34 Տե՛ս „République Française, Ministere des Affaires Etrangeres, Rapport a la S. D. N. sur la situation en Syrie et au Liban, Année 1937", Paris, 1938, էջ 6։

35 Տե՛ս Véou, Les Chrétiens en Péril au Moussa-Dagh, Paris, 1939, էջ 28—29։ Նաև՝ Sperduti, Giuseppe, Aspetti Giuridici della Questione di Alessandretta, Milano, 1939, էջ 179—180։

ները դարձել էին ավելի համարձակ և ուզում էին ահարեկման միջոցով ընկճել սիրիացի հայրենասերներին։ Վերջիններս տեղի չտվեցին, այլ դիմեցին ինքնապաշտպանության հակամիջոցների։ Մանդատային իշխանությունները, ցույց տալու համար, որ «անկողմնակալ» դիրք են պահում, կատարեցին թուրք և արաբ «ծայրահեղներին» ձերբակալություններ[36]։ Երբ սանջաքի արաբ «մուհաֆեզ» (նահանգապետ) Հուսնի Բարազիի պաշտոնը վերացվեց, շրջանի արաբ ու հայ բնակչությունը բոյկոտի ենթարկեց նոր ադմինիստրացիան, բազմաթիվ պաշտոնատարներ մերժեցին ծառայել նոր իշխանության ներքո։ «Նոր ռեժիմի» ուժի մեջ մտնելը ավելի էր ամրապնդել սանջաքում Սիրիայի հետ միասնության կողմնակիցների համերաշխ ճակատը։

Նոր Ստատուսի տրամադրություններին համաձայն, 1938 թ. դարնանը պետք է տեղի ունենային սանջաքի «ասամբլեային» ընտրությունները։ Ընտրությունները նախապատրաստող միջազգային հանձնաժողովը 1937 թ. հոկտեմբերի 20-ից մինչև նոյեմբերի 19-ը եղավ սանջաքում։ Հանձնաժողովի անդամները եղան ինչպես այլ համայնքների, այնպես էլ հայ համայնքի ներկայացուցիչների մոտ, որոնք հանձնաժողովին հայտարարեցին հայերի միահամուռ կամքը՝ սանջաքը պահպանել սիրիական պետության կազմի մեջ։

Այսուհանդերձ, անգլո-ֆրանսիական իմպերիալիստները, հաշվի առնելով Եվրոպայում տիրող լարված իրադրությունը, արդեն գաղտնի գործարքի մեջ էին մտել Անկարայի կառավարողների հետ՝ սանջաքը թողնելու Թուրքիային, վերջինիս զինակցությունը անխուսափելի թվացող համաշխարհային կոնֆլիկտում ապահովելու համար։ Սանջաքում դտնվող միջազգային ընտրական հանձնաժողովի բելգիացի անդամ Ժակ Լաղրանժը այդ խոստովանել էր հայ համայնքի ներկայացուցիչներից մեկին, 1937 թ. հոկտեմբերի վերջերին Անտիոքում դաղտնի խոսակցության ժամանակ հայտարարելով. «1940 թ. առաջ սանջաքը կկցվի Թուրքիային. այդ կցումը անհրաժեշտ է նկատվում, որպեսզի Թուրքիան Գերմանիայի կողմը չանցնի»[39]։

Սիրիայի ողջ հասարակայնությանը, սանջաքի բոլոր հայրենասերներին ծանոթ էին իմպերիալիստների մութ պլանները։ Անհրաժեշտ էր ավելի կազմակերպված և հետևողական կերպով նախապատրաստվել հանրաքվե-ընտրություններին և մեկ մարդու պես մասնակցելով քվեարկություններին՝ միջազգային հանձնաժողովի և համաշխարհային հասարակական կարծիքի առջև ապացուցել, որ սանջաքի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը դեմ է Սիրիայից որևէ ձևով շրջանի անջատմանը։ Սանջաքի կոմունիստներին վիճակված էր խաղալ պատվավոր դեր՝ սիրիական սանջաքի պաշտպանության միասնական ճակատը 1936 թ. ստեղծելու և հետագայում այն ամրապնդելու դործում։ Իսկ հայ կոմունիստները վճռական դեր էին կատարում սանջաքի կոմունիստական կազմակերպության ղեկավարության ու ամբողջ գործունեության մեջ[40]։

Արաբ-հայկական համագործակցությունը գործնական ձև և լայն մասշտաբներ ստացավ, երբ 1938 թ. հունվարի 30-ին Անտիոքում հավաքված արաբ և հայ հայրենասիրական բոլոր քաղաքական խմբավորումները որոշեցին կազմել «Ժողովրդական դեմոկրատական ուժերի համախմբում»[41]։ Այդ համախմբման գործունեությունը դարձավ ավելի արդյունավետ ու հուսալի, երբ 1938 թ. մարտի 13—15-ը սանջաք այցելեց Սիրիայի ու Լիբանանի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ռալեղ Բևդրաշը[42]։ Նրա և սիրիական կառավարության կողմից հատուկ միսիայով սանջաք ուղարկված Ներիհ էլ-Աղմեի նախաձեռնությամբ տեղի ունեցավ հայրենասիրական քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը[43]։ Խորհրդակցությունը մշակեց ու ընդունեց համաձայնեցված գործողությունների այն պլանը, որը պետք է կենսագործվեր հայ-արաբ դեմոկրատական համախմբման անդամ բոլոր կազմակերպությունների կողմից հանրաքվե-ընտրությունների ընթացքում։ Ընդունված հիմնական որոշումներից մեկը հետևյալն էր. ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի սանջաքից դուրս ապրող բնիկ սանջաքցիները մասնակցեն հանրաքվեին։ Այս միջոցառումը դարձել էր հրատապ անհրա-

---

36 Տե՛ս „Rapport a la S. D. N.—1937", նշվ. աշխ., էջ 6—7։

37 Տե՛ս Longrigg, նշվ. աշխ., էջ 241, Toynbee Arnold, Survey of International Affairs—1938, London, 1941, էջ 480։

38 Տե՛ս Արևելագիտության սեկտորի արխիվ, գործ №№ 7, 9, 11։

39 Նույն տեղում, գործ № 9։

40 Այս մասին տե՛ս վերևում նշված մեր հոդվածը, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 12, էջ 33—34։

41 Տե՛ս «Ժողովուրդի Ձայն», Բեյրութ, 13 փետրվարի, 1938։

42 Նույն տեղում, 20 մարտի, 1938։

43 Նույն տեղում, 27 մարտի, 1938։ Նաև՝ Արևելագիտության սեկտորի արխիվ, գործ №№ 1, 7։

ժեշտություն, որովհետև շուրջ 25.000 կեղծ «սանջաքցիներ» բերվել էին և մինչև մայիս պետք է բերվեին Թուրքիայից՝ սեպարատիստների կողմից քվեարկելու համար[44]։ Մեծ և պատասխանատու պարտականություն էր դրվում հայկական կազմակերպությունների վրա։ Արդարև, մի քանի հազար մուսալեռցիներ ու քեսապցիներ ապրում էին Սիրիայի ու Լիբանանի տարբեր քաղաքներում. հարկ էր ապահովել նրանց մեծ մասի մասնակցությունը հանրաքվեին։ Կային նույնպես սանջաքից դուրս ապրող հազարավոր բնիկ սանջաքցի արաբներ։ Ալեքսանդրետի պաշտպանության կոմիտեների անդամ բոլոր կազմակերպությունները, հատկապես կոմունիստական կուսակցությունը, Ազգային բլոկը, «Սուրիահայ ժողովրդական ճակատը», ինչպես նաև Մուսա-լեռան ու Քեսապի հայրենակցական միությունների տեղական մասնաճյուղերը շնորհակալ և մեծ աշխատանք կատարեցին այս ուղղությամբ[45]. Բնիկ մուսալեռցի՝ ակտիվ. նվիրված կոմունիստ Հովսեփ Կրիկյանի ղեկավարությամբ 1938 թ. մայիսին բեյրութարնակ շուրջ 90 մուսալեռցիներ Լաթաքիայի վրայով, ծովով, մեծ դժվարություններ հաղթահարելով հասել են Մուսա-լեռ և մասնակցել հանրաքվեին[46]։ Մուսալեռցի Ալեքսանդր Փաշայանը հայտնում է, որ Ազգային բլոկի տրամադրած միջոցներով և արար ու հայ հայրենասերների օգնությամբ ինքը կազմակերպել է շուրջ 150 սանջաքցիների փոխադրումը Դամասկոսից սանջաք[47]։ Ուրիշ հայեր ևս, իրենց հասարակական պարտականությունների բերումով, մասնակցել են Հալեպի և Հյուսիսային Սիրիայի շրջաններից մի քանի հարյուր սանջաքցիների իրենց ծննդավայրը փոխադրելու գործին, որը կենսագործվում էր Ազգային բլոկի և «Սուրիահայ ժողովրդական ճակատի» կողմից[48]։ Այս գործում շնորհակալ աշխատանք կատարեցին Հալեպ-Ալեքսանդրետ-Անտիոք երթուղիներով աշխատող հայ ավտովարորդները, որոնք հոժարակամ ու անվճար կատարեցին հարյուրավոր սանջաքցիների փոխադրումը Հալեպից։ Փոխադրման կազմակերպումը վստահված էր սանջաքցի ակտիվ կոմունիստ ու ավտոտրանսպորտի աշխատող Փայլակ Իսրայելյանին, որը կոմկուսի ընդհատակյա գրականության փոխադրման գործում մեծ ավանդ ու մեծ փորձ ուներ[49]։ Այսպիսով, շուրջ 2000 բնիկ սանջաքցի հայեր, նույնքան և ավելի արաբներ փոխադրվեցին իրենց ծննդավայրը։

1938 թ. մայիսի 3-ին սկսվեցին գրանցումները ընտրական ցուցակներում՝ ըստ համայնքների[50]։ Սիրիական ընտրական օրենքի համաձայն, համապատասխան համայնքի ընտրական ցուցակում գրանցվելը պետք է կատարվեր ըստ համայնքային փաստական պատկանելիության։ Սակայն, դիվանագիտական ու քաղաքական ուժեղ ճնշման շնորհիվ, Անկարայի կառավարությանը հաջողվել էր Լիգայի կողմից մշակված ընտրական կանոնադրության մեջ մտցնել հոդվածներ, որոնք իրավունք էին վերապահում որևէ սանջաքցի ընտրողի՝ գրանցվել իր ցանկացած համայնքի ցուցակում[51]։ Այդ հոդվածների շնորհիվ սեպարատիստների համար հնարավորություն էր ստեղծվում կաշառքի, ահաբեկման և այլ ապօրինի միջոցներով իրենց ցուցակում գրանցել տալ, իրենց կողմնակիցներից բացի, նաև այլ համայնքների պատկանող ընտրողների։ Ընտրական ցուցակներում գրանցվելը փաստորեն հանգելու էր ժողովրդական հարցման։ Սանջաքը սիրբական պետության կազմում պահե՞լ, թե՞ հանձնել Թուրքիայի գերիշխանությանը։ Սանջաքի ապագա «պառլամենտում» տեղերը պետք է բաշխվեին համամասնորեն՝ ըստ յուրաքանչյուր համայնքի ցուցակում գրանցված ընտրողների քանակի։ «Թուրք համայնքի» (սեպարատիստների) ցուցակի մեծամասնություն ձեռք բերելու դեպքում սանջաքը անխուսափելիորեն կկցվեր Թուրքիային։ Ուստի, անհրաժեշտ էր հետևողականորեն պայքարել, որպեսզի էքստրեմիստ-սեպարատիստները չկարողանան ապօրինի միջոցներով «մեծամասնություն» շահել։ Ահա այսպիսի լուրջ խնդիր էր դրված սանջաքի հայրենասերների միասնական ճակատի առջև, իսկ նրանք պատվով կատարեցին այդ խնդիրը։ Սեպարատիստները ջախջախիչ պարտություն կրեցին հանրաքվե-ընտրություններում։ Արդարև, 1938 թ. մայիսի 22-ին ընտրական գրանցումները ավարտվել էին գրեթե բոլոր տեղամասերում և արդյունքները շատ պերճախոս էին. քվեարկողների շուրջ 65 տոկոսը գրանցվել էր

44 Տե՛ս Homet, նշվ. աշխ., էջ 11։

45 Տե՛ս Արևելագիտության սեկտորի արխիվ, գործ N.N 1, 5, 7, 11։

46 Տե՛ս նույն տեղում, գործ N 10։

47 Տե՛ս նույն տեղում, գործ N 13։

48 Տե՛ս նույն տեղում, գործ N.N 5, 15։

49 Տե՛ս նույն տեղում, գործ N.N 1, 5։

50 Սանջաքում պաշտոնապես ընդունված համայնքներն էին հետևյալները. արաբ-սունի, արաբ-ալավի, թուրք, հայ, հույն-ուղղափառ, քուրդ։

51 Տե՛ս League of Nations, Official Documents C. 103. M. 56, 1938, Final Regulations for the First Elections in the Sanjak of Alexandretta, Geneva, 1938, էջ 4—7։

սանջաքը Սիրիայի կազմում պահելու կողմնակից համայնքների ցուցակներում, դրանով մեկ անգամ էլ արտահայտելով սանջաքի արար ու հայ ճնշող մեծամասնության արդար կամքը[52]։ Սեպարատիստները պարտություն էին կրել հակառակ իրենց ապօրինի բոլոր գործողությունների[53], հակառակ հայ, արաբ և այլ ընտրողների վրա գործադրած ահաբեկման տարբեր միջոցների ու զինված հարձակումների[54]։ Իրենց շովինիստական լոզունգներով և ապօրինի գործելակերպով սեպարատիստները իրենցից վանել էին բազմահազար թուրք դեմոկրատների, իսկ մյուս կողմից՝ ավելի ամրապնդել ու զոդել հայ-արաբ ազգայրական համերաշխությունը։ Այս կապակցությամբ Ֆ. Գրեյվզը գրում է. «Թուրք էքստրեմիստների իմբակը ճնշման և ահաբեկման ուղղությամբ այն աստիճանի ծայրահեղությունների հասավ, որ կորցրեց բազմաթիվ թուրք չավավորականների աջակցությունը»[55]։ Հ. Գորդոնը ականատեսի վկայությամբ հաղորդում է, որ «ամբողջ մամուլը, արաբները ու հայերը, թուրքմենները հրճվում էին սեպարատիստների աղաղակող պարտությունից»[56]։

Սեպարատիստների պարտության գործում վճռական դեր կատարեց սանջաքի հայ ազգաբնակչության հայրենասիրական ճիշտ և արի դիրքորոշումը։ Ահա թե ինչ է գրում այս մասին Դամասկոսի «Էքո դը Սիրի» թերթը. «Սանջաքի հայերը իրենց դրսևորեցին որպես հիանալի և լոյալ սիրիական քաղաքացիներ։ Սանջաքցի հայը համերաշխվել, միաձուլվել է արաբների հետ որպես ապացույց հավատարմության՝ հանդեպ իր նոր երկրի և ի նշան երախտագիտության՝ հանդեպ արաբների, որոնց հետ նա եղբայրացել է»[57]։ Սիրիացի ականավոր քաղաքական գործիչ դոկտոր Ա. Շահբանդարը Կահիրեի հայ լրագրողներին տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է. «Ալեքսանդրետի սանջաքի 35.000 հայերը իրենց դրսևորեցին որպես գերազանցորեն լավ սիրիացիներ։ Արաբների հետ նրանց հարաբերությունները միշտ էլ եղել են հիանալի, իսկ նրանց սքանչելի դիրքավորումը Ալեքսանդրետի կոնֆլիկտի այս օրերին էլ ավելի ամրապնդեց այդ հարաբերությունները»[58]։ Խոսելով Ալեքսանդրետի, Անտիոքի և Հալեպի հայերի մասին, «որոնք ավերվաղույն կեցվածք են ունեցել թուրքական պրոպագանդայի դեմ», «Ալիֆ-Բա» թերթի թղթակիցը գրում է Հալեպից. «Արտասահմանից հասած տեղեկություններից իմանում ենք, որ հարյուրավոր հայեր ճանապարհ են ընկել դեպի Ալեքսանդրետ՝ պաշտպանելու համար իրենց երկիրը թուրքերի ընչաքաղցությունից, պատրաստ՝ նույնիսկ իրենց արյունը թափելու»[59]։ Դամասկոսի «Ալ-Այյամ» թերթը իր հերթին պախարակելով Հալեպի մի շարք արար «վաճառականների ու երևելիների, որոնք թուրքից ավելի թուրք են դարձել», եզրակացնում է, որ նրանց դիրքավորումը «բացահայտ հակադրության մեջ է գտնվում բոլոր հայերի հայրենասիրական կեցվածքի հետ»[60]։

Ինչպես վերևում նշվեց, սեպարատիստները վերջնական պարտություն էին կրել սանջաքի հանրաքվե-ընտրություններում։ Օրինականության ճանապարհը այլևս փակված էր նրանց առջև՝ իրենց պլանները իրագործելու համար։ Անկարան անհրաժեշտ գտավ նորից խոսել «ուժի դիրքերից»։ Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Ռ. Ասլան մայիսի 21-ին արդեն Փարիզ էր հղել ուլտիմատումի բովանդակություն ունեցող նոտա, պահանջելով «մինչև ամսվա վերջը, ինչ գնով էլ լինի, ձեռք բերել սանջաքի կոնֆլիկտի վերջնական կարգավորում»[61]։ Զուգահեռաբար՝ հրահրվեցին արյունալի խառնակություններ Անտիոքում և այլուր, վիրավորվեցին ու սպանվեցին բազմաթիվ արաբներ ու հայեր[62]։ Երբ հայտնի դարձավ, թե զինված հարձակում է պատրաստվում հայկա-

---

52 Տե՛ս Alta, նշվ. աշխ., էջ 53։ Toynbee, նշվ. աշխ., էջ 484։ „Le Temps", 23 հունիսի, 1938։ Heald Stephan, Documents of International Affairs, 1937, London, 1939, էջ 470։

53 Տե՛ս «Ժողովուրդի ձայն», 13 փետրվարի, 1938, 29 մայիսի, 1938։ Նաև՝ Homet, նշվ. աշխ., էջ 11։ Veou, Désastre, նշվ. աշխ., էջ 79։

54 Տե՛ս «Ժողովուրդի Ձայն», 5 հունիսի, 1938։ Նաև՝ „L'Europe Nouvelle", Paris, 8 ապրիլի, 1939, էջ 371։

55 Graves Philip, The Nineteenth Century and After, London, օգոստոս, 1938, էջ 165։

56 Gordon Helen, Syria As It Is, London, 1939, էջ 169։

57 „Les Echos de Syrie", Damas, 11 հունիսի, 1938։

58 «Ալիֆ-Բա», Դամասկոս, 11 մայիսի, 1937։

59 Նույն տեղում, 11 փետրվարի, 1937։

60 «Ալ-Այյամ», Դամասկոս, 12 փետրվարի, 1937։

61 Տե՛ս S. Heald, նշվ. աշխ., էջ 470։

62 Տե՛ս „Дипломатический Словарь", հատ. 3, էջ 378։

կան ու արաբական դյուզերի վրա, ամբողջ սանջաքում հայտարարվեց ընդհանուր գործադուլ և մի քանի հարյուր հայ լեռնականներ Մուսա-լեռից ու Ֆեսալիս կազմակերպված ձևով իջան Անտիոք[63]։ Մայիսի 30—31-ին Անտիոքում տեղի ունեցան բոլորի վիթխարի ցույցեր ու միտինգներ, որոնց մասնակցեցին սանջաքի բոլոր կողմերից եկած հազարավոր հայրենասերներ[64]։ Ցույցը հունիսի 1-ին ցրվեց բանակի կողմից, Անտիոքում հաստատվեց պարեկային ժամ և «ընտրական գործողությունները» կասեցվեցին ամբողջ սանջաքում։

Տեղի տալով Անկարայի ու Լոնդոնի ռազմական, քաղաքական ու դիվանագիտական ուժեղ ու հարատև ճնշման առջև, Փարիզը համաձայնվել էր Թուրք սեպարատիստների համար «ապահովել մեծամասնություն սանջաքի ապագա պառլամենտում»։ Հունիսի 3-ին ամբողջ սանջաքի տերիտորիայում մտցվեց արտակարգ ռազմական դրություն և ամբողջ իշխանությունը հանձնվեց իմպերիալիզմի մոլի կամակատար, ֆաշիստ մայոր Կոլեին[65]։ Մայր առան ոչ Թուրք և առաջադիմական տարրերի հալածանքն ու համատարած ռեպրեսիաները։ Էքստրեմիստների ղեկավար Ա. Մելքը նշանակվեց «Սանջաքի ներքին դործերի դիրեկտոր» և բոլորովին ազատ ասպարեզ բացվեց ապօրինությունների համար։ Բանտերից ազատ արձակվեցին քրեական հանցագործները, նրանց տեղերը լցվեցին հայրենասերները[66]։ Ազգերի Լիգայի կողմից սանջաքի ընտրություններին վերահսկող հանձնաժողովը հունիսի 29-ին հեռացավ սանջաքից։ Միաժամանակ Փարիզում, Անկարայում ու Անտիոքում տարվող ֆրանս-Թուրքական գաղտնի բանակցությունները վերջացան 1938 Թ. հուլիսի 3-ին ստորագրված «Զինվորական կոնվենցիայով» և «Բարեկամության դաշինքով»։ Հուլիսի 5-ին սանջաք մտան Թուրքական զորքեր և դրանով իսկ կանխորոշվեց շրջանի հետագա ճակատագիրը[67]։

Արաբները ու հայերը, սանջաքի բոլոր հայրենասերները բոյկոտի ենթարկեցին օգոստոսին «Թղթի վրա կատարված ընտրությունները», որից հետո սանջաքի «պառլամենտը» 1938 Թ. սեպտեմբերի 2-ին հռչակեց «Հաթայի պետության» ստեղծումը։ 1939 Թ. հունիսին «Հաթայը» կցվեց Թուրքիային[68]։

Սիրիայում ու Լիբանանում Ֆրանսիայի բարձր-կոմիսար Գաբրիել Պյուոն խոստովանում է, որ «Ֆրանսիան սանջաքը լքելու որոշումը ընդունել էր ելնելով լոկ իր սեփական շահերից՝ ապահովելու համար Թուրքիայի բարեկամությունը և նրա զինակցությունը»[69]։ Եվ իրոք, Թուրքիայի զինակցությունը ապահովվեց՝ սանջաքը Թուրքիային զիջելու գնով։ Ա. Ֆ. Միլլերը այս կապակցությամբ գրում է. «Թուրքիայի շահագրգռվածությունը սանջաքը աննեքսիայի ենթարկելու վերաբերյալ՝ բրիտանական դիվանագիտության ձեռքում որպես զենք ծառայեց Թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու համար։ Իսկ Ֆրանսիան, ինչպես «մյունխենյան» քաղաքականության հարցերում, այնպես էլ Մերձավոր Արևելքում ռազմական բլոկ ստեղծելու հարցում գնալով Անգլիայի հետևից, չհակառակվեց այլևս սանջաքը աննեքսիայի ենթարկելու վերաբերյալ։ Թուրքիայի պահանջին (որը վայելում էր անգլիացիների պաշտպանությունը), սակայն այն պայմանով միայն, որ Թուրքիան կմիանա անգլո-ֆրանսիական բլոկին»[70]։ Ինչպես հայտնի է, Թուրքիան պաշտոնապես միացավ անգլո-ֆրանսիական ռազմական բլոկին՝ Ալեքսանդրետի սանջաքը կցելուց չորս ամիս էլ չանցած, երբ 1939 Թ. հոկտեմբերի 19-ին Անկարայում կնքվեց «Անգլո-ֆրանս-Թուրքական փոխադարձ օգնության պայմանագիրը»։ Թուրքական կառավարությունը շտապել էր ստորագրել այդ ակտը, երբ իր արտաքին գործերի մինիստր Շ. Սարաջօղլուն դեռևս գրտնվում էր Մոսկվայից Անկարա վերադարձի ճանապարհին[71]։

---

63 Տե՛ս A. Toynbee, նշվ. աշխ., էջ 484։

64 Տե՛ս Արևելագիտության սեկտորի արխիվ, գործ №№ 11, 12։

65 Տե՛ս «Ժողովուրդի Ձայն», 12 հունիսի, 1938։

66 Տե՛ս A. Toynbee, նշվ. աշխ., էջ 485։ A. Alta, նշվ. աշխ., էջ 55։

67 Տե՛ս «Дипломатический Словарь», հատ. 3, էջ 377—378։

68 Տե՛ս «Ժողովուրդի Ձայն», 4 սեպտեմբերի, 1938։ Նաև՝ A. Alta, նշվ. աշխ., էջ 274։ «Հաթայի պետության» ստեղծման և միջազգային իրավական ստատուսի մասին տե՛ս «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, III, Արաբական երկրներ» ժողովածուն, Երևան, 1967, էջ 61—88։

69 Puaux Gabriel, Deux Années au Levant, Souvenirs de Syrie et du Liban, 1939—1940, Paris, 1952, էջ 56։

70 А. Ф. Миллер, Очерки новейшей истории Турции, М., 1948, էջ 191։

71 Նույն տեղում, էջ 209։

Խոսելով սանջաքի կցումից ու անգլո-ֆրանս-թուրքական պայմանագրի կնքումից հետո Թուրքիայի արտաքին քաղաքականության մասին, ՍՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը 1939 թ. հոկտեմբերի 31-ին հայտարարել է հետևյալը ՍՍՀՄ Գերագույն սովետի սեսիայում. «Թուրքիայի քաղաքականության մեջ մեզ համար այժմ շատ բան շատ ավելի պարզորոշ է դարձել, ինչպես Մոսկվայի բանակցությունների հետևանքով, այնպես էլ Թուրքիայը կառավարության արտաքին քաղաքական վերջին գործողությունների հետևանքով։ Ինչպես հայտնի է, Թուրքիան գերադասեց իր բախտը կապել պատերազմի մասնակից եվրոպական տերությունների որոշակի խմբավորման հետ։ Նա փոխադարձ օգնության պակտ կնքեց Անգլիայի ու Ֆրանսիայի հետ...։ Դրանով իսկ Թուրքիան վերջնականապես դեն շպրտեց չեզոքության զգուշավոր քաղաքականությունը և իրեն նետեց Եվրոպայում ծավալվող պատերազմի ոլորտի մեջ»[72]։

Այսպիսով, մանդատային տերությունը սիրիական սանջաքը զոհաբերեց իր քաղաքական ու դիվանագիտական շահերի ապահովման համար։ Սիրիայի սուվերենությունը և ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը կոպիտ կերպով խախտող իմպերիալիստական այս գործարքը մերժվեց Սիրիայի ժողովրդի և կառավարության կողմից, որը բողոքի հուշագրեր ուղարկեց Ժնև և Փարիզ։ Տեղի ունեցան բողոքի ցույցեր, միտինգներ, գործադուլներ։ Դեռևս իր անկախությանը չհասած Սիրիան 1939 թ. ռեալ հնարավորություններ չուներ ուժով պաշտպանելու իր արդար իրավունքը[73]։ Այսօր Սիրիան և արաբական բոլոր երկրները պահանջում են սանջաքը վերամիավորել իր իրավական տիրոջ՝ Սիրիական արաբական հանրապետության հետ։ Արաբական ժողովուրդների այդ պահանջը պաշտպանություն գտավ նաև միջազգային դեմոկրատական այնպիսի հեղինակավոր կազմակերպության կողմից, որպիսին է Ասիայի ու Աֆրիկայի ժողովուրդների համերաշխության կազմակերպության խորհուրդը, որը 1964 թ. մարտին Այժիրում դումարված իր VI սեսիայում ընդունեց հատուկ բանաձև Ալեքսանդրետի հարցի վերաբերյալ, որտեղ «ճանաչվում և վճռականորեն պաշտպանվում է սիրիական պետության այդ մասը բոլոր միջոցներով իր օրինական տիրոջը վերադարձնելու պահանջը»[74]։

Մենք համառոտակի շարադրեցինք սանջաքի պաշտպանության համար մղված համաժողովրդական պայքարին հայերի ակտիվ մասնակցության գլխավոր դրվագները։ Երբ շրջանը միացվեց Թուրքիային, սանջաքի ավելի քան 40.000 հայերը (ինչպես և շուրջ 20.000 արաբներ) հեռացան իրենց ծննդավայրից և վերաբնակվեցին Սիրիայի ուրիշ քաղաքներում և Լիբանանում։

---

72 «Известия», 1 դեկտեմբերի, 1939։

73 Տե՛ս «Дипломатический словарь», հատ. 3, էջ 379։

74 Տե՛ս Советский комитет солидарности народов Азии и Африки. Информационный бюллетень. № 2. М., 1964. էջ 19։